



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 25 ԱՊՐԻԼ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 24

ԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱՑ ԹԱԳԱԻՈՐԸ

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ,
աշխարհը՝ իր բնակիչներով:
Որովհետեւ ինք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ,
ովկիանոսներուն վրայ հաստատեց զայն:
Ո՞վ արժանի է Տիրոջ լեռը ելլելու.
ո՞վ կրնայ անոր սուրբ տանարին մէջ կանգնելու:
Ան՝ որ մաքուր է իր գործերով ու մտածումներով.
ան՝ որ ստութեան անձնատուր չեղաւ,
եւ նենգութեամբ երդում չըրաւ:
Այնպիսին Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ,
արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն:
Այսպէս կ'ըլլայ աստուածապաշտը,
որ կ'ուզէ քու ներկայութեանդ գալ,
ո՞վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆ ԵՐՈՒԲՆ ՈՒՂՂՈՒԲԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 10:1-33)



ԱՄԷՆ ԻՆՉ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ (10:23-33)

Պօղոս Առաքեալ կը գգուշացնէ, որ չըլլայ թէ մեր ապրեարկերպովը «Տիրոջ արդար զայրոյթը շարժենք» (22 հմբ): Որովհետեւ Աստուած իր փառքին ու անուան նախանձախնդիր պիտի չուզէ, որ որեւէ մէկ ձեռով այդ փառքը ուրիշին փրուի: Այս պարագային՝ անբան կուռքերուն, որոնց ճամբով նաեւ դեւերուն: Այս էր եւ է նաեւ Չարին ամբողջ դրդումը, ինչ որ նաեւ փորձեց անապարհին մէջ Իսրայէլի ժողովուրդին, նոյնը անապարհին մէջ Քրիստոսին, «Այս բոլորը քեզի կու տամ, եթէ երկրպագելով՝ պաշտես զիս» (Մտք 4:9): Քրիստոս կը պարասխանէ. «Գրուած է. քու Տէր Աստուածդ պէտք է պաշտես եւ միայն անոր ծառայես» (Մտք 4:10):

Անգամ մը եւս, վերադառնալով կուռքերու հարցին, ու այնպէս միւս ուրեւիտ երեւոյթին, նաեւ կրկնութեան գնով Առաքեալը կը յիշեցնէ ըսելով. «Ամէն ինչ արքօնուած է ինձի, բայց ամէն ինչ օգրակար չէ: Ամէն ինչ արքօնուած է ինձի, բայց ամէն ինչ չ'օգնէր ուրիշներու հաւաքը ամրապնդելու: Ուեւ մէկը միայն ինքզինք թող չմտածէ, այլ նաեւ՝ իր ընկերոջ մասին» (23-24 հմբ): Այսպէս օգրակարութիւնը ոչ թէ միայն անձին, այլ ուրիշին հաւաքը ամրապնդելու օգրակարութիւնը: Որովհետեւ, անձին եղած շահը կամ օգրակարութիւնը իմ ալ շահս է կամ օգրակարութիւնս. ինչպէս նաեւ անոր եղած վնասը՝ իմ ալ վնասս կրնայ ըլլալ: Ի վերջոյ, անհարը մաս կը կազմէ ընկերութեան, ինչպէս նաեւ ես մաս կը կազմեն այդ նոյն ընկերութեան: Սա կը նշանակէ, որ չէ կարելի անտարբեր ապրիլ, «ինձի ինչ»ի հոգեբանութեամբ: Մանաւանդ՝ քրիստոնէական ըմբռնումով, ու աստուածային սիրոյ սկզբունքով, «սէր ունեցողը կը զիջի, կը փոկայ, կը համբերէ, միայն ինզինքը չի մտածեր» (Ա Կորնթ 13:4-7):

Անդրադառնալով միւս ուրեւիտ հարցին, Պօղոս Առաքեալ յստակ ուղղութիւն մը կու տայ ըսելով.

1. «Ուեւ միւս որ շուկայի մէջ կը ծախուի՝ կերէք, առանց խղճմանքի հարց հանելու: Որովհետեւ ”Աշխարհը իր ամբողջութեամբ Տիրոջ կը պարկանի”» (25-26 հմբ): Մէքերում մը քաղուած Սաղմոս 24, ուր կը ներկայացնէ թէ ամէն ինչ Տիրոջ կը պարկանի, որովհետեւ ինքն իսկ է Տէրը, արարիչը ամէն ինչի: Ուրեմն, գոհուած միտերն ալ ի վերջոյ Տիրոջ կողմէ սպեղծուած ու փրուած են մարդուն: Հետեւաբար, ինչ որ Աստուծոյ կը պարկանի չպղծեր մարդը: Ինչպէս որ Քրիստոս պիտի ըսէ, ինչն է որ կը պղծէ մարդս. այն ինչ որ ներսէն դուրս կ'ելլէ, եւ ոչ թէ այն ինչ որ դուրսէն ներս կը մտնէ (Մտք 15:11):
2. «Եթէ հեթանոս մը ձեզ ճաշի հրաւիրէ եւ ուզէք երթալ, ինչ որ ձեր առջեւ դրուի՝ կերէք, առանց խղճի հարց հանելու: Իսկ եթէ պարտաւոր եք որ մէկը ձեզի ըսէ. ”Արիկա կուռքերուն գոհուած միւս է”, այդ պարագային մի՛ ուրէք, այն մարդուն համար՝ որ ձեզի յայտնեց, որպէսզի խղճի հարց չծաղի: Ձեր ընկերոջ խղճի հարցը» (27-29 հմբ):

«Կը բաւէ որ ամէն ինչ Աստուծոյ փառքին համար ընէք» (31 հմբ): Այս համարը եզրակացութիւնն է, ու մանաւանդ՝ նպարակը իւրաքանչիւր քրիստոնէայ անհարին, ինչ որ ալ պիտի ընենք անոր մէջ փեսնելու Աստուծոյ փառքը, ու այդ փառքին համար ընելու: Այսինքն՝ եթէ ուրեւիտ ու շնորհակալութիւն յայտնելով այն ամէն բարիքներուն համար, որ Աստուծմէ կու գան, զԱստուած փառաւորել կը նշանակէ, իսկ եթէ չուրեմ, որպէսզի իմ նմանս չգայթակղի, առաւել եւս զԱստուած փառաւորել կը նշանակէ, որովհետեւ Աստուծոյ ուզածը այդ իսկ է մարդուս փրկութիւնը: Անոր համար ալ անգամ մը եւս կը յիշեցնէ Պօղոս Առաքեալ ըսելով. «Գայթակղութեան պարճառ մի՛ ըլլաք՝ ոչ հրեաներուն, ոչ հեթանոսներուն եւ ոչ ալ Աստուծոյ եկեղեցիին: Ընդ այնպէս՝ ինչպէս ես կը փորձեմ բոլորն ալ սիրաշահիլ: Ոչ թէ իմ անձիս օգուտը կը փնտրեմ, այլ՝ բոլորինը, որպէսզի փրկուին: Ուրեմն ինձի, նմանեցէք, ինչպէս ես՝ Քրիստոսի» (32-33 հմբ): Գայթակղութեան պարճառ մի ըլլաք, ոչ դուրսիններուն, եւ ոչ ալ ներսիններուն, որպէսզի կարելի ըլլայ սիրաշահիլ: Եւ այդ սիրաշահիլը փրկութիւն իմաստով: Ուրեմն, իր կեանքի օրինակին հետեւելով, Առաքեալը կ'ըսէ. «Ինձի նմանեցէք, ինչպէս ես՝ Քրիստոսի»: Իւրաքանչիւր հաւաքացեալի կոչումն իսկ է Քրիստոսի նմանիլ: Ասկէ առաջ Քրիստոս պիտի ըսէր. «Նմանեցէք ձեր երկնաւոր Հօրը: Եղէք կարարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կարարեալ է (Մտք 5:48): Եղէք գթած, ինչպէս որ ձեր Երկնաւոր Հայրը գթած է» (Ղուկ 6:36): Իսկ Պօղոս Առաքեալ Կող 1:15 «Քրիստոս ինք՝ փեսանելի պարկերն է աներեւոյթ Աստուծոյ»: Իսկ Պօղոս Առաքեալ կը փորձէր փեսանելի պարկերը դառնալու Քրիստոսի: Նոյնպէս ալ իւրաքանչիւրիս կոչումն է այդ պարկերին նմանիլ: